

**ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲԱՌԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ.
ԻՄԱՍՏԱՅԻՆ /ԹԵՄԱՏԻԿ/ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Հազարամյակների ակունքներից բխում և դեպի մեր օրերն են խոյանում բազմադարյան պատմություն ու մշակույթ ունեցող երկու ժողովուրդների՝ հայերի ու պարսիկների բազմաբնույթ ընդհանրությունների հիման վրա ձևավորված ու զարգացած հարաբերությունները, այդ թվում՝ լեզվական ընդհանրություններն ու առնչությունները: Այդպիսի հարաբերությունների ու առնչությունների արգասիքն են հայ բարբառներում առկա բազմաքանակ պարսկերեն բառերը, որոնք ցայտուն դրսևորում են ստացել հայ տարբեր բարբառներով զրի առած և ՀԳԱԱ-ի կողմից լույս ընծայած հայ ժողովրդական հեքիաթներում:

Հարկ է նշել, որ պարսկերեն բառերի զգալի մասն ակնհայտորեն արաբական կամ թուրքական ծագում ունեն: Սակայն քանի որ այդ բառերը ակտիվ (երբեմն նաև պասիվ) կիրառություն ունեն պարսկերենում, ապա հնարավոր չէ ստույգ ասել, թե հիշյալ լեզուներից որից է բառը անցել հայերենին¹: Այսպես, օրինակ, հայ բարբառներում հանդիպում ենք օթաղ/օթախ-«սենյակ» բառին, որը պարսկերենում հիշյալ նշանակության համար ընդունված ու համագործածական բառ է, սակայն պարսկերեն բառարաններում նշված է որպես թուրքական փոխառություն, հետևաբար, ստույգ չի կարելի ասել, արդյո՞ք այն հայերենին է անցել պարսկերենից, թե՞ թուրքերենից, որի հետ նույնպես հայերենը սերտ շփումներ է ունեցել, և շատ բառեր նոր պարսկերենից հայերենին են անցել հենց այդ լեզվի միջնորդությամբ(Մ. Աբեղյան, 1968, 20): Տարակարծություններից խուսափելու նպատակով ստորև կներկայացնենք միայն բուն պարսկերեն բառերը և արաբերեն ու պարսկերեն արմատներով կազմված պարսկերեն բառաբարդումները:

Լեզվի բառապաշարի քննությունը անպայման պահանջում է որոշ կարգի դասակարգումներ: Վերջիններիս բնույթն ու սկզբունքները պայմանավորված են մի շարք գործոններով՝ նյութի ծավալ, քննության մեթոդներ ու նպատակադրում, ուսումնասիրողի հայեցակետ և այլն(Հովհաննիսյան Լ., 2008, 5):

¹ Սուանձին բառերի ստուգաբանություններ, իհարկե, կան, բայց դրանք ընդամենը մի քանիսն են:

Հարկ է նշել, որ ցանկացած դասակարգում անթերի չէ: Աստ թեմատիկ խմբերի դասակարգման դեպքում առարկությունները կարող են լինել այս կամ այն միավորի՝ տվյալ, և ոչ թե հարակից խմբում ներառելու, բառերի լեզվական արժեքը չտարրորոշելու, հոմանիշների գործառական առանձնահատկությունները չտարբերակելու և նման այլ խնդիրների վերաբերյալ (Հովհաննիսյան Լ., 2008, 5):

Լեզվաբանական գրականության մեջ բառապաշարը դասակարգվում է նաև ըստ իմաստային/թեմատիկ/ խմբերի: Իրանական փոխառությունները բոլոր կարգի փոխառությունների մեջ միակն են, որ բնիկ հնդեվրոպական բառերի նման ընդգրկվում են իմաստային /թեմատիկ/ բոլոր խմբերը (Ջահուկյան, 1987, էջ 577):

Ստորև փորձել ենք տալ հնարավորինս լիարժեք դասակարգում: Մեր ուսումնասիրության առարկա բառերը զետեղել ենք հետևյալ իմաստային /թեմատիկ/ խմբերում². Ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառեր, Մարմնի մասեր ցույց տվող բառեր, Ջենքերի տեսակներ և ռազմական-զինվորական բնագավառին առնչվող բառեր, Բույսերի անուններ, բուսականություն, Կենդանական աշխարհ, Կենցաղ. առօրյա-կենցաղային բառեր /իրեր, հագուստ, կերակուր/, Արհեստներ, առևտուր, մասնագիտություն, զբաղմունք, գործիքներ, նյութեր և դրանց հետ կապված բառեր, Պետական-վարչական մարմիններ, պաշտոն, օրենք և դրա հետ կապված բառեր, Հիշյալ խմբերից դուրս մնացած բառեր

Ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառեր - Այս խմբին պատկանող բառերն ընդամենը երեքն են՝ *նանի/նանե* «մայր, մեծ մայր» - *nane/* (Աճառյանը գտնում է, որ բառը փոխառված է թուրքերենից/Աճառյան, 1902/, իսկ Օմիդի բացատրական բառարանում նշված չէ որպես այդպիսին), *բաբի/բաբա* «հայր, մեծ հայր» - *bābā*, *դայի* «մորեղբայր» - *dāyi*:

Մարմնի մասեր ցույց տվող բառեր - *չանա/չմոմ* «կզակ» - *čāne*, *ջիգյար/ջըգյար/ջիգր/ջիգեր/ջիկառ/ճեկար* «լարդ» - *jegar*³, *բյալլա/բյրյալլա/բալլա* «գլուխ» - *kalle*, *գարդան* «վիզ» - *gardan*, *պենի* «քիթ» - *bini*, *չարյա/չահրե* «դեմք» - *čehre*, *դել* «սիրտ» - *del*, *չմոգ* «բուռ, քաթ, ճանկ» - *čang*, *փեյ* «ուղեք» - *pā*,

² Հիշյալ խմբերում չենք ներառել կրոնական բնագավառին վերաբերող բառերը, քանզի շատ ավելի վիճարկելի է, քան պարսկերենի մյուս արաբական փոխառությունները՝ կապված իսլամի՝ արաբական ծագում ունենալու հետ:

³ Ավելի շատ օգտագործվում է փոխաբերական իմաստներով, ինչպիսիք կան նաև հենց պարսկերենում (Nəjafi Ab., Farhange farsie amiane, 1378):

փաչե«1սրունք,2.տաքատի փողք» -pāčē, փոստ//փոսթ-pust, դմակ//տրմակ// տիմրկ//դմրկ «դմակ»-donbe, ջան «մարմին, հոգի՝անձ»-jan⁴:

Ջենքերի տեսակներ և ռազմական-գինվորական բնագավառին առնչվող բառեր թվանք//բըվնքը//թըվոնգյ//թվոնքը//թըվանգյ//թիփանգյ//թֆանք// թիրփանգյ// թվանգյ//թուվանգյ//թֆայ«հրացան»tofang,թափանչա«ատրճանակ» tapānčē,գուրգյ/գյուրգ «գուրգ»-gurz, նիգե «վահան»-neyze⁵, դոմոմ/դամա// դամ// խամեմ/խամա/կամա «երկսայր դաշույն»-gheme, խանչալ/խանջալ «դաշույն»-xanjar, նաչըխ/նոջոխ «կացին»-nāčax⁶, չոմախ/չոմբախ «մահակ, դագանակ»-čomāgh/չոնbe, լաչկար«բանակ, բանակի 12000-անոց զորա-գունդ»-laškar, քյաման«աղեղ»-kamān, դուշման//դյուշման// «թշնամի»-došman:

Բույսերի անուններ, բուսականություն- քարխուն«թարխուն»-tarxun, դոմն«հացահատիկ»-dāne, չինարի«չինար»-čēnār, սալվի-չինարի«նոճի-չինար» -sarv+čēnār, բլղուր«կիսածծած ցորեն»-balghur, բյութթ«թուփ»-bute, բաղ «այգի»-bāgh, բաղչա«այգի»-bāghčē, բոստան«բանջարանոց»-bustān⁷, չիման «մարգագետին, կանաչածածկ վայր»-čaman:

Կենդանական աշխարհ - ջանավար«կենդանի, գազան»-jānevar, մադիան«եգծի»-madiān, դև/դով«դև»-div, վիշապ/օշափ/հ'ուշապ -«վիշապ»⁸-vešāp, մայմուն//մեյմուն«կապիկ»-meymun, թագի«որսորդական շան տեսակ»-tāzi, թուլա«շան ձագ»-tulē, փոլոնգյ«ընձամյուծ»-palang, բոբբոլ«առյուծ»-babr⁹, միրչեմ «մրջյուն»-murčē, ֆիլ«փիղ»-fil, բլբուլ//բիլբուլ//«սոխակ»-bolbol կամ հազարան բլբուլ(հազար«սոխակ, սոխակի տեսակ՝ հազարածայն, հազարաթև»-hazār), դազ/խազ/կազ«սագ»-ghāz, լակլակ/լազլազ«արագիլ»-laklak, բուֆ«բու»-buf, զաղ«ազոռվ»-zāgh, ջին«դև»-jin:

Կենցաղ. առօրյա-կենցաղային բառեր/հոեղ, հազուստ, կեղևակուր/-

⁴ Պարսկերենում ավելի շատ ունի «հոգի» իմաստը, իսկ հայերենում ավելացել է նաև «մարմին» նշանակությունը:

⁵ Կան-Վասպուրական շրջանների հեքիաթներում բառն օգտագործված է ոչ թե «նիզակ», այլ՝ նշյալ իմաստով, որպես և բացատրված է հատորի վերջում կցված բառարանում:

⁶ Բառի իմաստը հատորի /9/ բառարանում բացատրված է «ուժգին հարված», որը . ըստ երևույթին, ըստ համատեքստի ընկալման տրամաբանական բացատրություն է, քանի որ Ամառյանի Արմատական բառարանում բառը համարվում է սուտ կամ չիմծու «...դրանք ուրիշ բան չեն, եթե ոչ աղճատուած ձեռագրերի սխալ գրչութեանց կամ սուտ ենթադրութեան արդիւնք, որոնք նորագիտ լաւագոյն ձեռագրերի ընթերցմամբ կամ բանասիրական քննութիւններով փոխուած կամ ջնջուած/հ.1, էջ 14/։ Իսկ Օմիդի պարսկերենի բացատրական բառարանում այդ բառը վկայաբերված է որպես «կացին»:

⁷ Պարսկերենում նշանակում է «բուրաստան, պարտեզ»:

⁸ Վիշապ <*vešāp հմմտ. ավ. vešāpa-(aži «իժ» բառի մակդիր՝«թունահյութ») -Ձահուկյան, 1987, 546

⁹ Անհատականի պատճառով հատորի բառարանում «վազր»-ի փոխարեն տրված է «առյուծ» նշանակությունը:

ա. Կենցաղ, բնակարան, կահ-կարասի. խանա«տուն»-xāne, դոռ«դուռ»-dar, մեյիվան«հյուր»-mehmān, դարբազա«դարպաս»-darvāze, չըփար «ցանկապատ»-čapar, սաքու«քարե նստարան»-saku, գերզամբի«նկուղ»-zirzāmīni, այվան «պատշգամբ»-eyvān, օթախ«սենյակ»-otāgh¹⁰, աշփազխանա «խոհանոց»-āšpazxāne, փանջարա«պատուհան»-panjare, այնա«հայելի»-āyīne, տախտ«թախտ»-taxt, լիեք«վերնակ»-lahāf, դոշակ«նեքնակ»-tošak, միալի «ներքնակ»-nahāli, բալիշ«բարձ»-bāleš, նարդըվան«սանդուղք»-nardbān, փիլաքյան «սանդուղք»-pellekān, դուքի//կուքի«արկղ»-ghuti, ամբար «ամբար, մառան»-anbār, թեշտ«տաշտ»-tašt, ջվալ//չուվալ«մեծ պարկ»-javāl, խուրջին «երկաշքանի պարկ»-xorjin, սուփրա«սփռոց»-sofre, դաստախուն«սփռոց»-dastxān, բուխարի «վառարան»-boxārī, տոլապ«պահարան պատի մեջ»-dolāb, փարդա «վարագույր»-parde, ռուզի«օրվա ապրուստ»-ruzi, թունդիր//թորոն//թոներ«թոնիր»-tanur, խալիչա«փոքր գորգ»-ghālīče, քաֆկիր«ծակոտիներով շերեփ կամ գոլալ»-kafgir, չանգալ«պատառաքաղ»-čangāl, չախլու«դանակ»-čāghu, սինի «սկուտեղ»-sīni, ջամ«բաժակ»-jām, ֆինջան«սուրճի բաժակ»-fenjān, փարչ «կավե կամ մետաղե ջրաման»-pārch, քասե«թաս»-kāse, թաս«թաս»-tās, լանգառի«մեծ սկուտեղ»-langari, թունգի«ջրաման կամ գինու աման, կուժ»-tong, չայդան «թեյաման»-čāydan, շուշա«շիշ»-šiše, մուս«մոս»-mus, շամատան//շոմդոյի «մոմակալ»-šam'dān(ածանցում արաբերեն šam' արմատով և պարսկերեն dān ածանցով), դոփոզ«վանդակ»-ghafaz, չուբուխ//չիբուխ-čopogh, ժինջիլ/զնջիլ «մետաղյա շղթա»-zanjir, զիբիլ«աղբ»-zebil, չամադան«ճամպուրակ»-chamedān, բոխչա«կապոց, մեծ կտոր, որի մեջ իրեր են դնում»-boghče, բիզ«սուր, ծակող գործիք»-biz, զոմբուլ/զամբլա«զամբյուղ»-zanbil, ախուռ«ախոռ»-āxur, բարդան «պարկ»-bārdān, չարխ«անիվ»-čarx, խուշկի«չոր գոմաղբ»-xošq, փշըլ «ոչխարի գոմաղբ»-pešqel, հավանգ«հավանգ»-hāvan, քիլիդ«բանալի»-kelid, չըրադ«լամպ, լույս»-čerāgh, բարխանա «ճամփորդության ժամանակ վերցվող իրերը»-bārxāne, քուրսի«քուրսի»-korsi:

բ. Դագուստ, հագուստի պարագաներ – փարչե«գործվածք, կտոր»-pārchē, բազպանդ/բազբեանդ/բազմանդ«թևի կապ, ապարանջան»-bāzsuband, մինթանա«կանացի երկար գգեստ»-nimtane¹¹, արխալուդ«արխալուդ»-arxālogh, չուխա «չուխա»-čuxā, շալվար//շըլվար«տաբատ»-šalvār, քյամար//քամար// գյոմոր «գոտի»-kamar, kamarband, փափուջ«ոտնաման»-pāpus, չավրա// չադրա

¹⁰ Թեև բառը պարսկերենում համարվում է թուրքերենից փոխառյալ, սակայն տվյալ իմաստի համար միակ համագործածական բառն է, ուստիև քերում ենք մեր ցուցակում:

¹¹ Պարսկերենում նշանակում է բաճկոնակ, կիսագգեստ:

«կանացի վերնագգեստ»-čādor, քյուլլահ«գլխարկ»-kolāh, թունբան// թոմբան «նեքնագգեստ», դաստմալ«թաշկինակ»-dastmāl, շալ«շալ, քիկնոց»-šāl:

գ. Կերակուր - խորակ//խորագյ//խորոք//խորագ«ուտելիք»-xorāq, նոխուտ«սիսեռ»-noxođ, ֆնդոխստ//ֆընտղ«կաղին»-fandogh(Այս երկու բառերը Աճառյանը համարում է թուրքական փոխառություն/Աճառյան, 1902/սակայն Օմիդի բառարանում այդ մասին խոսք չկա), զուզ«ընկույզ»-guz, բաղամ«նուշ»-badām, խուրմա«արմավ»-xormā, շոքյար«շաքար»-šekar, խյար«վարունգ»-xiār, մեյվա«միրգ»-mive, չայ«թեյ»-čāy, շովթուլի«դեղծի տեսակ»-šaftālu, շըմբալուք «շագանակ»-šanbalid//šanbalile, փլավ«փլավ»-polo, բրինձ«բրինձ»-berenj քիշ-միշ«չամիշ»-kešmeš, շարաբ«գինի»-šarāb, դոշաբ«արմավի կամ խաղողի թանձրահյուք»-došāb, չիրո«մրգի թանձրահյուք»shire, քյաբաբ//քեպապ «խորոված»-kabāb, շուրվա//շորվա «բրնձով ապուր»-šurvā, ալուչա «սալորի մանր և թթու տեսակը»- ālucē, մոզո«թեթև ուտելիք արագ սնվելու համար»-mazze:

Արհեստներ, առևտուր, մասնագիտություն, զբաղմունք, գործիքներ, նութեռ և դռանց հետ կապված բառեր

ա. Արհեստ, առևտուր, մասնագիտություն, զբաղմունք - փեշակ //փեշըկ//փեշագ«արհեստ»-piše, փեշաքյար//փըշեշակավեր«արհեստավոր»-pišeqār, սոմոթքյար«աղեստավոր»-san'atqār/արաբերեն san'at+ պարսկերեն qār/, ուստա//ուստե«վարպետ»-ostā/ostād/, զարգար//զարգյար//զիրգյոր «ոսկերիչ»-zərgar, աշպագ«խոհարար»-āšpaz, բաննահ«որմնադիր»-bannā, մեխանա«գինետուն»-meyxāne, քյարխանա«գործարան»-karxāne, քյարգահ// քյարկյահ«գործարան»-kārgāh, դարզի«դերձակ»-darzi, նալբոմդ«պայտար»-na'lband/արաբերեն na'l + պարսկերեն band/, փալանդուզ«համետ կարող»-pālānduz, չըլընգյար«փականագործ»-čelengar, պազրկան//բազրկան//բազիրկյան «առևտրական»bāzargān, սովդաքար//սովտաքյար«առևտրական»-sudāgar, քարվան«քարավան-kārvān, բազար«շուկա»-bāzār, աբասի//ապասի «պարսկական դրամական միավոր շահ Աբբասի օրոք»-abbāsi, թուման«պարսկական դրամական միավորը»-tumān/թեն Օմիդի բառարանում համարվում է թուրքական փոխառություն/, շահի//շայի «իին պարսկական մանրադրամ»-šāhi, քիսա//քիսըք «քսակ»-kise, փուլ«փող, դրամ»-pul, խրիղ//խրիտ«գնում»-xarid, դուբանտար//տուլընտար«խանութպան»-dokandār/պարսկերեն կազմություն/, խուրդա «մանր փող»-xord, pule xord, մուֆթա «ծրի»moft, չարսու//չարշի «շուկա»-čārsugh//čārsu, բաղեպան//պաղնեպան«այգեպան»bāghbān, ռընչաքար//ռաշաքար//ըռընճըր«հողագործ, մշակ, բանվոր»-ranjbar, չոբան//չոպան«հովիվ»-chupān, նոքար//նոքյոր//նոքյար«ծառա»-nouqar, սարվան«քարավանատեր»-sārvān//

sārebān, բարկիր«բեռնակիր»-bārgir, համբալ/համալ«բեռնակիր»-hamlbar, լալա«ծառա»lālā, շոգյիրդ«աշակերտ»-šagerd:

բ. Գործիքներ, նյութեր – թոռ«ուռկան»-tur, չեքուրճ/չաքուրճ/չաքուչ «մուրճ»-čakkoš, դազգյահ/դիզգյահ/դազգա«դազգահ, հաստոց»-dastgāh, քար-գահ/քրկա«մանածագործական հաստոց»-kārgāh, չանգյալ«կեռ թրով գործիք»-čangak¹², չանգ«եղանի պես գործիք»-čangak, փալան«համետ»-pālān, բիզ«սուր ծակող գործիք»-biz, արբշըմ/ապրեշում«մետաքս»-abnšam, ջուվար«զոհար»-jouhar/gouhar, փուրուզա«փիրուզ»-firuz, քյահրբար«սաթ»-qahrabar, մահուդ-māhut, պուլադ«պողպատ»-pulād, մալա«հարթեցնելու գործիք, ծեփիչ»-māle, մես«պղինձ»-mess, զախմե«սազ նվագելու գործիք»-zaxme:

Պետական-վարչական մարմիններ, պաշտոն, օրենք և դրա հետ կապված բաներ – շահ«թագավոր»-šāh, շահրն-շահ«արքյից արքա»-šāhanšāh//šāh-e šāhan, շահզադա«արքայազն»-šāhzāde, փորիզմոդա «արքայադուստր»-parizāde, քոշկ«դոյակ, պալատ»-kušk, սարայ/սարե«պալատ»-sarāy, դիվան «1.պալատ, 2.դատ, դատավճիռ»-divān, դիվանխանա«դատարան»-divānkhāne, թախտ«գահ»-taxt/, խազնադար/խազնդար«զանձապետ»-xazānedār/պարսկերեն կազմություն/, ամարաթ/ըմարաթ«դոյակ, ընտիր շինություն»-emārāt/արաբական փոխառություն է պարսկերենում՝ իմաստափոխված ձևով/, մուհր//մոհր//մեհր//մեհոյուր«կնիք»-moħr, քեաթխոդա «տանուտեր»-kadxoďā, շհար//շահար//շիհոր«քաղաք»-šahr, շահրիստան«մեծ քաղաք»-šahrestān, մեյդան «ասպարեզ, հրապարակ»-meydān, քուշա/քյոշմ«փողոց»-kuče, սորիմոդ «սահման»-sarhad, սարտար«հրամանատար»-sardār, սարմիե «դրամագլուխ»-sarmāye:

Հիշյալ խմբերից դուրս մնազած բաներ -

Գոյականներ- յալ«ծիու վիզը և վզի մագերը»-yāl, սիլա«ապտակ»-sili, դաֆազ«վանդակ»-ghafas, փեշբաշ«նվեր»-pišqeš, բաշխիշ«նվեր»-baxšeš, հունար«հնարք, շնորհք»-honar, դարդ«դարդ, ցավ»-dard, սելալ«հեղեղ, ջրհեղեղ»-seylāb/արաբերենseyl+ պարսկերեն āb /, դաստա«տրցակ, փունջ, կապ»-daste, զահար«թույն»zahr, չարխս«անիվ»čarx, դարվիշ«1.դերվիշ, 2.աղքատ, 3.մուրացիկ, 4.թափառական»-darviš, քաքուլ«խոպոպ, մազափունջ»-kākol, գյուլար «վարդաջուր»-golāb, զոռ«ուժ»-zur, դոստ«մտերիմ, ընկեր»-dost, ռանգ/ըռանկ «գույն»-rang, քունջ«անկյուն»-konj, մհանա«առիթպատճառ»-bahāne, զաղա «քարանձավ»-zāghe, աբուռ«պատիվ»-āberu, թալակ«թակարդ»-tāleh, բար «բերք»-bār, դարման«բուժում»-darmān, ֆանդ«1.հնարք, 2.խորամանկություն»-

¹² Հնարավոր է նաև, որ լինի «պատառաքաղ» բառի իմաստի նմանեցում:

fand, զիան«վնաս»-ziān, քարվանսըրա-kārvānsarāy, խար«փուշ»-xār, գյոռ «գերեզման»-gur, ռսմոմ//ասմանի«երկինք»-āsemān, սիմ«լար»-sim, քյուլուգ «1.հնարք,2.խորամանկություն,3.ծեռնածություն»-kalak, փարի«փերի, գեղեցկուհի»-pari, լեշ«սատկած կենդանու դիակ»-laš, մուզդ«աշխատավարձ»-mozd, շվա«լացուկոծ, սուգ»-šivān, ջամսաթ«դիակ»-jasad, սուրմա«սուրմա»-sorme, լափ«ափ»ջրի լափինք-fab, մուժդա«ավետիս»-mojde, քեֆ«1.քեֆ, զվարճություն»-keyf, ճատուքյար«կախարդ պառավ»-jādugar, «խալ, կետ»-xāl, խոնջա «ուրախություն»-xonje, ջամալ«գեղեցկություն»-jamāl, ամանաթ«ավանդ, պահ տված իր»- amānat. զնդան«բանտ»-zendān, դըխսստ«սրտի ուզած»-delxaste, քուլ«սար»-quh, քընար«եգր, կողմ»-kenār, քուլնջ«անկյուն»-qonj, գախ «ժամանակ»-gāh, ֆարման«հրաման»-farmān, փելք«շողք,լույս»-peik, սըբր «համբերություն»sabr,խաստ«նպատակ»ghasd,փոլ«կամուրջ»pol,դարզ«ծեղք»darz,բար«բեռք»-bār,դայեկ«դայակ»-dāye, լաքա«կետ, բիծ»-lake, դարամաթ«եկամուտ»-darāmad, չալա«փոս»-čāle, արամիշ«հանգստություն»-ārāmeš, դոթոթ-թոփո «սար/բլուր/ ու ձոր»-darre, tappe, ջուան//ջիհան«աշխարհ»-jahān, դուզ «սապատ»-ghuz,բոշ«ծիու բաշ»-boš, խալ«բիծ»-xal, բութա«թուփ»-bute, բանդ «կապ»-band, դաստուր«հրաման»-dastur, զոռ«ոսկի»-zar, թալաշ«ջանք»-talāš, թիքա«կտոր»-tekke, նըբալուդ«նորածին»-nobāve, չաթր«հովանոց»- čatr, փշկըլ «զոմաղբ»-peškel, ֆալ«զուշակություն»-fāl, ջուռա«տեսակ»-jur, իշարաթ «ակնարկ»-ešāre, ջամ«ապակի»-jām,բութա«կուռք»-bot, ֆար-թառ-Աճառյանն Արմատականում ասում է՝ բնիկ հայերեն է, սակայն չի բացառվում նաև պարսկերեն ֆար «թել, լար» բառի՝ փոխառված լինելը/ պայա«հետիոտն»-pāyā«քայլող»//piāde«հետիոտն», նոռ«արու»-narr, խոշ ու բեշ«լավ ու վատ, որպիսություն»-xoš o beš:

Ածականներ- թազա«նոր»-tāze, քոռ«կույր»-qur, լալ«համր»-lāl, քյառ «խուլ»-kar,քաչալ«ճաղատ»-qačal, նազուկ«նուրբ, քարակ»-nāzok, աժդըհա «հսկա»-ejdehā¹³, նամարդ«տմարդի, փոքրոգի»-nāmard, դոռուստ«ճիշտ»-dorost, թամբալ«ծուլ,ալարկոտ»-tanbal, խամ-«1.անվարժ, չհմտացած, 2.չեփած»-xām, նամ«թաց»-nam, ջուհարդար«փայլուն, ընտիր»-joughardār, նաչար«անճար»-nāčār, բարեբար«հավասար»-barābar, մուֆթա«ծրի»-moft, ջուռա-ջուռա «տեսակ-տեսակ»-jurājur, բեթար«ավելի վատ»-badtar, զառբաթ«ոսկեիլուս»-zarbāft, միզյարան«անհանգիստ»-negarān, վալադ«բանիմաց, իրագեկ,զրծից հասկացող»-vāred, դոշմոնգ«գեղեցիկ»-ghašang, քյոհմո«հին»-kohne, թունդ «1.սուր,կծու, 2.կոպիտ, խստաբարո»-tond, բիյաբուռ«անամոթ»-bi āberu,

¹³ Պարսկերենում նշանակում է աժդահակ, վիշապ, մեծ օձ

թորոզ«կանոնավոր»-tarāz¹⁴, ֆեքսուզ«մտախոհ»-fekrsuz/արաբերեն fekr + պարսկերեն suz /, բեռանգ«անգույն»-birang, բեուշ«ուշագնաց»-biḥuš, մուռտալ«անպետք, կեղտոտ»-mordār, քիփ«կիպ, իրար մոտ, իրար կպած»-kīp, սարֆրաս«հպարտ»-sarafrāz, խոշ«լավ»-xoš, խուրտ«մանր»-xord, շոռ«աղի»-šur, բորնտազ«վայելչագեղ երիտասարդ»-tīrandāz«մետածիզ», ռանգին «զու-նավոր»-rangin, ջալաբ կին«վատաբարո»-jalab, սարխոշ«ուրախ, գինովցած, գինեզվարթ»-sarxoš, փարիշան«ցրված, մտացրիվ»-parišān, մաթ«ապշած, մոլորված»-māt, մախոշ«հիվանդ»-nāxoš, սարսարի«անհոգ, քեթևամիտ»-sarsari, մանշուր«հայտնի»-mašhur, սորբոսթ«համարձակ»-sarbaste¹⁵, մոզյալ«ծուլլ, մակարոյծ»-angal, բաբաթ«արժանի, հավասար»-bābat/=sazavar, šāyeste, ոշքորոտ«պարզ, ակներև-āškārā, նոֆեդոտ«անօգուտ»-bifāyde/պարսկերեն bi + արաբերեն fayde/, զհանքյար«վնասատու-ziānkār, ջամբազ«քաջ, անձնագոհ»-jānbāz, զրընկ«ծարպիկ»-zerang, թամ-դրուս«տեղը տեղին, կարգին»-tandorost, կոնտ «Աճառյանի Արմատականում՝ «մագերը թափած, ճաղատ, հերարժակ», Օմիդի բառարանում՝ «դանդաղ ու կամաց շարժվող մարդ», երկուսն էլ համապատասխանում են համատեքստի իմաստին-kond, չադ«գեր»-čagh, ջիվան «երիտասարդ»-javān, թազա-նուբար«նոր հասած»-tāze, noubar, ջադու «պառավ»-jādu¹⁶,

Մակըրախե- նակաստան«հանկարծակի»-nāgahān, չափուկ«թեթև, արագ»-čabok, համաշա«միշտ»-hamiše, փիադա«հետիոտն»-piāde, խիլլո «շատ»-xeyli, զոռաքի«ուժով, մի կերպ»-zuraki, սադա«անընդհատ, միայն»-sāde¹⁷ /Թեև կարելի է բխցնել նաև sadhā«հարյուրներ՝ բազում անգամ»-hg/, տարբեդար«դճնեղուճ»-darbedar, քաշքաշ«քաշքաշ»-qešāqeš, գյահ-գյահ «երբեմն»-gah-gāhi, դորբոր«շուրջը»-dourobar, ճապ«ծախ»-čap, թահնա «մենակ»-tanhā, ֆըրդա«վաղը»-fardā,

Շադկապներ և այլ խոսքի մասեր - յա«կամ»-yā, վ«և»-va, թա«որ, որպեսզի»-tā, հակյար//ակյար«եթե»-agar, բըլե«բայց»-vali, չունքի//չունքյի «քանի որ»-čon qe, նա ...նա//նը//նե«ոչ...ոչ»-na...na, համ...համ«և...և...»-ham...ham, բալքի//բալի«գուցե»-balke/արաբերեն bal+ պարսկերեն ke/, գեոյա«ասես»-guyā, քաշկա«երանի թե»-kāš qī, ռասդի«ի դեպ»-rāsti, զահրըմար-zahremar, աֆարըմ«ապրես»-āfaron, հանգամ«ժամանակ»-hengām, թոքյ «1.կենտ, 2.մենակ, 3.միակ»-tak, հոմոմ«հենց այն»-hamān, թանա«մենակ,

¹⁴ Պարսկերենում ունի «հարթաչափ» նշանակությունը:

¹⁵ Պարսկերենում՝ «1. գլխածակ, վրան ծածկած, փակած, 2. անորոշ»:

¹⁶ Պարսկերենում նշանակում է կախարդ:

¹⁷ Տես Աճառյան, 1902:

միայն»-tanhā, յախուտ«կամ»-yā+xod, մկար//մգար«միթե»-magar, շայան «ար-
ժանի»-šāyān, հեշ-heč, թիքա-թիքա«կտոր-կտոր»-teke-teke, ջուխտ«զույգ»-joft,
ֆուլանքյաս«ոմն մեկը»-folān kas/արաբերեն folān +պարսկերեն kas/, մջ«ո՛վ»-
qi, հարքեշ//հարքյաս«ամեն մեկը»-har kas:

Պարսկերեն բառերը, որոնք նկատելիորեն շատ են Հայ ժողովրդական
հեքիաթներում, ընդգրկում են իմաստային բազմաթիվ խմբեր: Դրանք լայն
կիրառություն ունեն կենցաղում, արհեստի ու առևտրի բնագավառներում: Քիչ
չեն հանդիպում նաև զենքերի անվանումներն ու պետական-վարչական բնա-
գավառին վերաբերող եզրույթները, մարմնի մասեր ցույց տվող բառերը: Ավելի
սակավ գործածություն ունեն բույսերի ու կենդանիների անունները և ազ-
գակցական հարաբերություն արտահայտող բառերը(վերջիններս ընդամենը
երեքն են):

Խոսքամասային դիտակետից քննելիս ավելի մեծ թիվ են կազմում
գոյականները, ապա ածականներն ու մակբայերը, գործածվում են նաև շաղ-
կապներ, կապեր, եղանակավորող բառեր: Փոխառված թվականներ չեն
հանդիպում:

Պարսկերեն բառերը, թափանցելով հայերենի բարբառային բառա-
պաշար, իրենց բուն իմաստներից բացի կամ դրանց զուգահեռ ձեռք են բերել
նոր իմաստներ կամ նրբիմաստներ:

Օգտագործված աղբյուրներ

- 1.Արեղյան Մ., Երկեր, Գ, Երևան, 1968
- 2.Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, I-IV, Երևան, 1971-1979
3. Աճառյան Հր., Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, Սոսկվա-Վաղարշապատ, 1902
- 4.Հայ ժողովրդական հեքիաթներ, I-XV, Երևան, 1959-1998
- 5.Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, I մաս, Երևան, 2008
- 6.Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987
7. Omid Hasan, I-II, Farhange farsie Omid, Tehran, 1381
8. Najafi Abolhasan , I-II, Farhange farsie amiane, Tehran, 1378